

**ԱՐՄԵՆ ՇՈՒՋՈՒՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

## **ԻՐԱՎՈՒՔԻ ՍՈՅԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն հոդվածում բացահայտվում են իրավունքի սոցիալ-մշակութային արժեքի էությունը և հասկացությունը: Իրավունքը դիտարկվում է համաստցիալական մոտեցման տեսանկյունից՝ որպես կոնկրետ քաղաքակրթության սոցիալ-մշակութային արժեք:

**Հիմնարարեր՝** իրավունք, սոցիալական հասարակություն, մշակույթ, արժեք, արժեհամակարգ, նորմատիվ կարգավորիչ:

Վարքագծի այլբնորանքային տարրերակների միջև ընտրության անհրաժեշտությունը բնորոշ է ոչ միայն ճանաչողական գործնքացի համար, այլև ցանկացած այլ սոցիալական գործողության համար: Իրավական իրողության մեջ անզամ անգործությունը հաճախակի իրենից ներկայացնում է լարված ընտրության արդյունք: Իր հերթին, ցանկացած ընտրության հիմքում միշտ գտնվում է որոշակի արժեհամակարգ: Հենց արժեքային մոտեցման շնորհիվ հնարավոր է դառնում սուբյեկտների բուն իրավական ակտիվությունը, ինչպես և սոցիալական գործունեության մնացած բոլոր ձևերը: Արժեքային երանգ նետելով սոցիալական աշխարհի այս կամ այն երևույթին՝ անհատներն ու ընդհանուրությունները դրանով իսկ նույնացնում են դրանք իրեն ցանկալի կամ անցանկալի, դրանց հետ են կապում իրենց շահերն ու մտադրությունները: Այն օբյեկտը, որը սուբյեկտի աշքերում գորկ է արժեքային նշանակությունից, իր համար «կույր քիծ է», այսինքն՝ չի գրավում դրա ուշադրությունը և հաշվի չի առնվում իր կողմից իր վարքագծում: Որպես կանոն, արժեքների տակ հասկանում են առարկաների ու երևույթների որոշակի որակները, որոնք անհատական կամ կողեկտիվ փորձի տեսանկյունից ունեն արտահայտված դրական կամ բացասական արժեք: Բրիտանական հանրագիտարանի համաձայն՝ արժեքը «սովորական կիրառման մեջ եղարկույթ է, որը նշանակում է արժեքավորը»<sup>1</sup>: Արժեքի տակ կարելի է հասկանալ «ցանկացած հետաքրքրության, ցանկության, ձգտման և այլ յուրաքանչյուրի առարկան»<sup>2</sup>: Սուտեցումների նկատմամբ փոքրինից այլ մոտեցումը կապված է նրա հետ, որ «դրանք կայուն համոզմունքներ են նրանում, որ վարքագծի (գործողությունների) որոշակի տեսակն ավելի նշանավոր է (նախընտրելի է) մշակույթի գոյություն ունեցող տեսակում կամ մշակութային կոնտինումում»: «Տեսական վարքագծի նպատակների ու նորմերի մասին մարդկանց ընդհանուրացված

պատկերացումները, որոնք մարմնավորում են պատմական փորձը և կուտակված արտահայտում են առանձին ազգի և ողջ մարդկության մշակույթի իմաստը»<sup>4</sup>:

Արժեքների բնույթի մասին փիլիսոփայական պատկերացումներն եապես տարրերվում են արմատական պողիտիվիզմից, որը բխում է արժեքների հարաբերական (ռելյատիվ) բնույթից, որ հանգեցվում է սուբյեկտի համար օրյեկտի ցանկալի լինելուն կամ վերջինի զգացումներին մինչև օրյեկտի վիզմը, որի տեսանկյունից արժեքների գոյությունն ընդհանրապես կապված չէ մարդու հոգեֆիզիկական կազմվածքի հետ (Ս. Շելեր). դրանք հասկացվում են իրեն բուն իրերի ու անձանց առանձնահատուկ հատկություններ (Ս. Գարտման)<sup>5</sup>:

Կառուցվածքային ընդհանուր մոդելը, որի հետ կապվում է արժեքների մասին պատկերացումը, հիմնված է նրա վրա, որ մարդկային վարքագիծը կրում է ինտենցիոնալ (այսինքն՝ ուղղորդված) բնույթ: Իրողության տարրերը տարրերը կարող են մարդու կամ կողեկտիվի մոտ առաջացնել կամ ձգողություն, կամ վանում: Դրանից ելնելով՝ արժեքը կարող է բնութագրվել իրեն մի որակ, որի ուժով առարկան կամ երևույթը դառնում է սոցիալական ձգտումների օբյեկտ:

Առօրյա հասարակական փորձում արժեքներն ակնառու կերպով դրսևորվում են ընտրության իրավիճակներում, երբ սուբյեկտից պահանջվում է նախապատվություն տալ վարքագծի այս կամ այն տարրերական:

Արժեքային բովանդակությունը դրված չէ սոցիալական իրողության բուն առարկաների ու երևույթների մեջ, այլ ներմուծվում է գնահատող սուբյեկտի կողմից: «Մենք ընկալում (ճանաչում) ենք մարդկանց և իրերը, որոնք ունեն արժեք կամ չունեն այն: Եվ դրա հետ մեկտեղ մենք մեզ հաշիվ չենք տալիս նրա համար, որ մենք՝ դիտարկման սուբյեկտներս, հանդիսանում ենք արժեքային շա-

փանիշների արժեք, այլ ոչ թե իրեք ու մարդիկ՝ այդ դիտարկման օբյեկտները»: Օբյեկտի այն որակը, որը տվյալ հանգա-մանքներում հանդես է գալիս որպես դրական արժեք կոնկրետ անձի համար, մեկ այլ սուրյեկտի համար կամ նույնի համար այլ պայմաններում կարող է փոխել իր նշանը հակառակին կամ դառնալ ընդհանրապես անտարբեր:

Սակայն արժեքներն ունեն ոչ միայն սուրյեկտիվ, այլև օբյեկտիվ բովանդակություն: Այն բխում է հենց նրանից, որ արժեքների ծագումը մնում է կոլեկտիվ, անգամ եթե բուն գնահատականը բխում է առանձին անհատից: Արժեքներն օբյեկտիվ են այն չափով, որով դրանք պահպանում են իրենց խմբային պատկանելիությունը: Այս իմաստով կոնկրետ մարդու համար տարբերվում են մի կողմից իր սեփական սուրյեկտիվ արժեքները, իսկ մյուս կողմից՝ այն սոցիալական խմբի (ընդհանուրյան) արժեքները, որին նա պատկանում է: Արժեքների վերջին կատեգորիան իր նկատմամբ հանդես է գալիս իրեն արտաքին մի քան, որոշ իմաստով՝ հարկադրական, նշանակում է՝ օբյեկտիվ:

«Արժեք» ու «գին» հասկացությունների նմանությունը ոչ թե հեռու է պատահական համընկնումից, այլ արտացոլում է այն հանգամանքը, որ հասարակական կարգի ժամանակակից ձևը մեծապես հիմնվում է փոխանակման տիպի կատեգորիաների ու պատկերացումների վրա: Ընկալման այս մոդելի շրջանակներում բոլոր սոցիալական հարաբերություններն ու ինստիտուտները դիտարկվում են իրեն փոխանակման հասուկ տարատեսակներ: Կարելի է ենթադրել, որ արժեքների մասին բուն հարցադրումն իրենից ներկայացնում է ապրանքադրամական հարաբերությունների տարածման կողմնակի էֆեկտ:

Այս իմաստով իր վրա ուշադրություն է դարձնում արժեքի ու գնի ակնհայտ կապը<sup>8</sup>: Մի շարք դեպքերում այս հասկացությունները կարող են հանդես գալ իրեն միմյանց փոխարինելիք. օրինակ, ուսական թարգմանությունների համաձայն՝ Պրուդոնը զարգացնում էր արժեքի աշխատանքային տեսությունը, իսկ Մարքսը՝ արժեքի աշխատանքային տեսությունը. ընդ որում, արժեքի ու գնի տակ հասկանում են միևնույն երևույթը:

Այս պատկերացումների արմատները կարելի է հայտնաբերել հնագույն մշակույթներում: Օրինակ, Մ. Մոսի «Ընծայի մասին ակնարկ» դասական աշխատության մեջ նկարագրվում են մատրիցեղերի հավատամքները իրի հոգիների մասին, այդպես կոչված հառները (բառացիորեն՝ «քամի»): Այս հոգին անընդհատ նպաստում է ցանկացած առարկայի և ունի սեփական ստիպողական

ուժ. մասնավորապես, այն կարող է պարտադրել նրան, ում նվիրված էր իրեն կատարել փոխադարձ նվեր, կամ վրեմիսնդրություն կատարել նրա նկատմամբ, ով զողացավ այս իրը: Ընդ որում «հառուն», ըստ երևույթին, ձգտում է «վերադառնալ իր ծննդավայրը» և ընդհանրապես «ինքն է հանդես գալիս անհատի նման մի քան»<sup>9</sup>:

Հստ եռյան, այստեղ արդեն երևում է իրի «կրկնակիի» առաջացման գործընթացը, որը կատարում է ընկերակցության մեջ տարբեր կարգավորիչ գործառույթներ և որոշ չափով գիտակցվում է իրեն ինքնուրույն մի քան: Հետագայում տեղի է ունենում նոր տրոհում, որի ժամանակ իրի այս ողին սկսում է հանդես գալ արդեն երկու դեմքով՝ արժեքի ու գնի տեսքով, որոնք երբեմն միաձայլվում են: Ընդ որում, արժեքն իրենից ներկայացնում է հղում դեպի իրի ձգողական, օգտակար հատկությունները, իսկ արժեքը հանդես է գալիս իրեն նրանց քանակական չափը որոշ համարժեքում:

Այս հատկություններն առավել հաճախ չունեն ինքնուրույն գոյություն, այսինքն՝ չեն կարող գոյություն ունենալ իրենց կրիչներից առանձին: Օրինակ, «արդարությունը» միշտ կոնկրետ արարքի կամ որոշման հատկություն է, «ազատություն» կարող է ունենալ (կամ չունենալ) կոնկրետ անձը և այլն: Այնուամենայնիվ, այս հատկությունները, որոնք համապատասխան հուզական արձագանք են առաջացնում սոցիալական սուրյեկտների մոտ, ենթարկվում են ֆետիշացմանը կամ «ռեֆիֆիկացմանը» (իրականացմանը), այսինքն՝ նրանց կողմից ընկալվում են իրեն ինքնուրույն մի քան: Այսպիսով, արժեքները ձեռք են բերում առարկայացված բնույթ և դառնում են հիմնադիր գործոն, որը սահմանում է մարդու գործողությունները:

Քանի որ հասարակության մեջ կարող է գոյություն ունենալ ոչ թե մեկ, այլ մի քանի «չափողական սանդղակ», այսինքն՝ նորմատիվ համակարգեր, ապա միևնույն երևույթի արժեքի մասին պատկերացումը տարբեր է լինելու՝ կախված նրանից՝ «կեկալի» որ տեսակն է կիրառվելու դրա գնահատման համար: Այդպիսի կարգավորիչ համակարգերից մեկն է հանդիսանում իրավունքը, որի տակ հասկանում են իշխանության իրավունք ստացած ձևականորեն որոշակի կանոնների հավաքածու: Այս իմաստով ցանկացած սոցիալական փաստը կամ երևույթը կարող է ստանալ իրավական գնահատական՝ դրական, բացասական կամ չեզոք: Սակայն բուն իրավունքի՝ իրեն ինքնուրույն ինստիտուտի գնահատման համար իրավաբանական չափանիշներն անընդունելի են: Ոչ ոք չի կարող դատավոր լինել սեփական գործում, ուստի «իրա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վունքի իրավաբանական արժեքը», ինչպես և «քարոյականության բարոյական արժեքը» և այլն կի-նեին դատարկ ու տավտողգիշական: Հետևաբար, բուն իրավունքի արքիոնգիշական գնահատականը պահանջում է ընտրել մեկ այլ հաշվարկակետ:

Մասնավորապես, հաճախակի ուշադրություն է գրավում իրավունքի բարոյական գնահատականը: Օրինակ, Ցիցերոնը իրավունքի նշանակությունը հանգեցնում է անկասկած բարոյական բարիքների, առաջին հերթին՝ խիզախության ամրագրման անհրաժեշտությամբ: Իրավունքի բարոյական արժեքի մանրամասն հիմնվորումն առաջարկեց Վ.Ս. Սոլվյովը, ով դիտարկում է իրավունքն իրեւ հարկադրական բարոյական մինիմում, այսինքն՝ բարոյականության յուրօրինակ նվազեցված շեմ, որի ժամանակ պահանջների համեմատաբար ցածր ծավալը փոխհատուցվում է դրանց կատարման երաշխիքների ուժեղացմամբ: Փաստորեն, Սոլվյովի համար իրավունքը հանդիսանում է պայմատատիվ մի շափորշիչ, որը հանդիսանում է անհրաժեշտ գործիք բարոյականությունը պահելու համար գոնեն այն նակարդակում, որ հասարակությունը պաշտպանում է վախճանից: «Իրավունքի խնդիրը նրանում չէ, որ չարիքի մեջ գտնվող աշխարհը Աստծո թագավորություն դառնա, այլ միայն նրանում, որ այն մինչև ժամանակի գալը դժոխք չդառնա»<sup>10</sup>:

Հաշվի առնելով արժեքի ու գնի կապը՝ լիովին ընական է դիտարկել իրավունքի տնտեսական արժեքը: Այդ հարցն առաջին անգամ հիմնովին մշակում է ստանում մարքսիստական սոցիալական տեսության մեջ, որը ելնում է նրանից, որ ողջ իրավական մեխանիզմը գոյություն ունի միայն տնտեսական գործնթացները սպասարկելու համար, ձևավորվող արտադրական հարաբերություններն ապահովելու համար: Ներկայում գոյություն ունի միջառարկայական հետազոտությունների այնպիսի ինքնուրույն ուղղություն, ինչպիսին է «իրավունքի տնտեսական վերլուծությունը»: Մասնավորապես, դրա առաջատար ներկայացուցիչ Ռ. Պողներն իրավունքի տնտեսական արժեքը (կամ «տնտեսական իմաստը») տեսնում է նրանում, որ իրավական կարգավորումը ձևավորում է մի համակարգ, որը դրդում է մարդկանց «արդյունավետ վարվել ոչ միայն ակնհայտ շուկաներում, այլև սոցիալական փոխգործությունների ողջ լայն ընդգրկույթում»<sup>11</sup>: Խոսքը գնում է նրա մասին, որ իրավական միջոցներով մարդկանց վարքագիծն ուղղվում է ընդհանուր ծախքերի նվազեցման կողմն. «Իրավունքը ձգտում է «գուշակել», թե ինչպես կողմերը պետք է (ex ante) տեղապորել որոշակի բեռ կամ

շահ, օրինակ՝ պատասխանատվություն որոշակի հաջող կամ անհաջող չկանխատեսված հանգամանքի նյութականացման դեպքում: Եթե իրավունքը միշտ է «գուշակում», դա բերում է հենց տնտեսական ծախքերի նվազեցմանը՝ վերացնելով անհրաժեշտությունը գործարքների կնքելով կողմերի հետ իրավունքի միջոցով, ինչպես նաև չափազանց բարձր տնտեսական ծախքերի դեպքում ռեսուրսների արդյունավետ օգտագործում»:

Ըստ որում, Ռ. Պողները կանխատեսում է, որ նմանատիպ դիտարկումները կարող են քննադատության ենթարկվել բարոյական կողմերի անտեսման պատճառով, և ձգտում է ցուցադրել իրավունքի բարոյական ու տնտեսական արժեքի միջև առկա կապը. «Ազնվորյունը, հուսալիությունը և արդարությունը կրծատում են գործարքների ծախքերը: Քննությունից հրաժարումը նպաստում է բարիքների կամովին փոխարինմանը: Հարևանությունն ու ալտրուիզմի այլ կողմերը կրծատում են արտաքին ծախքներն ու մեծացնում արտաքին շահերը...»:

Այսպես կամ այնպես, բարոյականությունն ու տնտեսությունը մարմնավորում են իրավունքի արժեքի նկատմամբ միայն մասնակի, թեպես և սոցիալապես նշանակալից մոտեցումները: Ավելի ունիվերսալ գնահատականը ստանալու համար հարկավոր էր գտնել ընդհանրացնող համատեքստը, որի մեջ կարող են ներգրավել այս երկու արժեքային համակարգերը: Եթե հարց տանք այն ոլորտի մասին, որի նկատմամբ և բարոյականությունը, և տնտեսությանը, և իրավունքն իրենցից ներկայացնում են բաղկացուցիչ մասեր, ապա այդպիսին է հանդես գալիս մշակույթը: Ուստի իրավունքի տնտեսական, բարոյական և այլ հնարավոր գնահատականները կարող են սինթեզվել «սոցիոմշակութային արժեք» հասկացության մեջ:

Մշակույթը կարող է սահմանվել իբրև բնակվելու արիեստական միջավայր՝ յուրօրինակ վերակառույց կենսաբանական մեխանիզմների վերևույթ: Մշակույթի հիմնական գործառույթն է ստեղծել ամբողջականության կառույցները, որ ապահովում է մարդկանց համատեղ կյանքի հնարավորությունը: Կենդանական աշխարհում այս խնդիրը, ինչպես հայտնի է, լուծվում է գենետիկորեն փոխանցվող մեխանիզմների օգնությամբ, որոնք ապահովում են անհատների միջև հարաբերությունների արդյունավետ կարգավորում՝ առաջացնելով հակամարտությունների լուծումը ներառյալ: Մշակույթը, ընդհակառակը, սկզբունքորեն տարբերվում է գուտ կենսաբանական գործնթացներից, չի հանդիսանում մարդու բնական կենսաբանական ու հոգեբանա-

կան հատկությունների անմիջական շարունակություն<sup>13</sup>: Այն հնարավոր է միայն իբրև բարդացման գործընթաց, իբրև մշտապես վերարտադրվող ջանք և այս խնասով իրենից ներկայացնում է «մարդկային կենսագործունեության կազմակերպման ու զարգացման յուրօրինակ եղանակ, որը կտրականապես տարրերվում է կյանքի կենսաբանական ձևերից»<sup>14</sup>:

Բ. Մալինովսկու կողմից առաջարկված մշակույթի նկատմամբ գործառական մոտեցման տեսանկյունից ցանկացած սոցիալական ֆենոմեն կարող է և պետք է դիտարկվի իբրև մշակույթի՝ իբրև համակարգային ամբողջության համար արժեք ներկայացնող որոշակի հատկությունների կրիչ: Իր հերթին մշակույթն ինքնին ներկայացնում է հարմարանքների մի ամբողջական մեխանիզմ, որի հիմնական նշանակությունն է մարդու հենքային պահանջների բավարարումը: Այլ կերպ ասած, մշակույթը չգիտի անպետք ոչինչ. ցանկացած երևույթ, որքան էլ այն լինի աննշան կամ թվա ոչ պետքական, անխոսափելիորեն իր ներդրումն է կատարում այս ընդհանուր խնդրի լուծման գործում՝ այսպես կամ այնպես նպատելով այս հիմնարար պահանջների բավարարմանը: Ընդ որում, առանձնանում է երևույթների առանձին խումբ՝ այդպես կոչված, մշակութային իմպերատիվներ, որոնք հանդես են գալիս իբրև մշակութային ամբողջության բոլոր այլ գործառական տարրերի գործողության ունիվերսալ պայմաններ: Մասնավորապես, այդպիսի «մշակութային իմպերատիվների»՝ թվին Բ. Մալինովսկին դասում էր նաև իրավունք:

Այն փաստը, որ իրավունքն իրենից ներկայացնում է սոցիոմշակութային արժեք, կարելի է հաստատել երկու ճանապարհով: Առաջինը. հասարակության մեջ իրավունքի գոյությունը պահանջում է զգալի ռեսուրսներ: Իրավաբանական ենթակառուցվածքի կառուցումն ու դրա պահպանումն աշխատանքային վիճակում կապված են հասարակության համար նյութական, կազմակերպչական և այլ բնույթի հսկայական ծախսների հետ: Օրենսդրական կորպուրը, իրավապաշտպանական մարմինները, իրավաբանական գոյացություններն ու իրավաբանական դաշտի մնացած բոլոր ինստիտուցիոնալ տարրերն ունեն չափազանց բարձր «սոցիալական գին»: Սակայն արժեքի առկայությունը վկայում է այն մասին, որ գոյություն ունի նաև արժեքը, հակառակ դեպքում անհրաժեշտ ռեսուրսները չեն առանձնացվի:

Երկրորդը. իրավունքի սոցիոմշակութային արժեքն ակնառու կերպով դրսուրվում է ճգնաժամա-

յին ու հեղափոխական բնույթի իրադրություններում: Ցանկացած հեղափոխություն արտաքնապես իրենից ներկայացնում է արմատական խզում անցյալի հետ, որը դրսուրվում է սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարգավորման հիմքերի կտրուկ, թոփքային փոփոխության մեջ: Ուստի հեղափոխության առաջին զոհը սովորաբար դառնում է հասարակության իրավական համակարգը, որն ապահովում է սոցիալական բնույթի պահպանվածությունը: Հեղափոխությունը պահանջում է ոչ թե սահմանված իրավաբանական կարգերի միանվագ քանդում, այլ լիարժեք իրաժարում դրանցից: Դա նշանակում է, որ, վճիռ կայացնելով գոյություն ունեցող իրավակարգում, դրա վրա է դրվում հասարակության ողբայի վիճակի համար մեղավորության զգալի մասը: Սակայն, քանիդելով նախկին իրավակարգը, հեղափոխությունը գրեթե անմիջացած արագացված տեմպերով սկսում է ծնել սեփական նորմատիվային ձևերը: Բանը նրանում է, որ հեղափոխությունը կապված է առանձին վերցրած իրավական համակարգի վախճանի ու մահվան հետ, այլ ոչ թե իրավունքի՝ ընդհանուր առմանը իբրև սոցիալական ինստիտուտի վաճիսանի ու մահվան հետ: Ընդհակառակը, հեղափոխական փորձը հաստատում է իրավունքի ունիվերսալությունն ու անփոխարինելի լինելը՝ որպես սոցիոմշակութային ինտեգրման միջոցի, քանի որ իրավակարգի քանդման արդյունքում հեղափոխական ուժեր գրեթե անմիջապես ստեղծված են ինքնուրույն, դիմել իրավական ձևել՝ հասարակական կյանքի սկզբունքների ներդրման ու օրինականացման համար: Խսկապես, ցանկացած հեղափոխությունից հետո պահպանվում են իրավական համակարգի հենքային կառույցները՝ օրենքը, դատարանը, սեփականությունը, պայմանագիրը, հանգագործությունը, պատիժը, ոստիկանությունը և այլն: Փոխվում են միայն դրանց անվանումները, սուրյեկտները և այլն, սակայն ոչ իրավունքի հենքային այս ինստիտուտների բնույթն ու գործառույթները:

Այսպիսով, հասարակությունը նախընտրություն է տալիս իրավական ձևերին՝ իր գոյության և կայուն, և՝ ճգնաժամային ժամանակաշրջաններին: Իրավունքի ու դրա բացակայության միջև ընտրությունը անշեղորեն կատարվում է իրավական կարգավորման օգտին, թեպետ և դրա տեսակն ու բնույթը կարող են էապես տարրերվել՝ կախված կոնկրետ պատմական հանգամանքներից: Այլ կերպ ասած, իրավունքն ունի օբյեկտիվ սոցիոմշակութային արժեքը, քանի որ հանդիսանում է ամբողջ հասարակության մաշտարում մշտական ճգտումների առարկա:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի սոցիալ-մշակութային արժեքը սահմանելը նշանակում է պատասխանել հետևյալ հարցին. ինչպես է այն նպաստում մարդու հիմքային պահանջների բավարարմանը, այլ կերպ ասած, ինչպես է իրավունքը մասնակցում մարդկանց համատեղ գոյության հնարավորությունն ապահովող արհեստական միջավայրի ստեղծման գործում:

Իրավունքի արժեքի հիմնախնդիրն ինքնին առաջանում է որոշակի սոցիոմշակութային պայմանների առկայության ժամանակ: Առաջինը. ցանկացած արժեք արդիականանում է, որպես կանոն, դրա պակասորդի առաջացման ժամանակ, քանի որ հենց այդ ժամանակ պարզ է դառնում, որ պակասող, ոչ բավարար զարգացած սոցիալական կյանքի սկիզբն ունի իրական նշանակություն: Կարելի է ենթադրել, որ կենացական բոլոր պահանջների բավարարման հիմքենութիւն իրավիճակում մշակույթը չէր բախվի արժեքի հասկացությանը: Ընդհանուր առնամբ, բուն ընտրության իրադրությունն ազդանշում է այն մասին, որ առկա հնարավորություններն անսահման չեն, և որ հանուն միայն մեկ բարիքի հարկ է լինելու գոհաբերել մեկ այլ բան: Այսպիսով, իրավունքի՝ իրեն արժեքի գիտակցման պատճառ կարող է ծառայել հասարակական կարգուկանում իրավական տարրերի պակասը:

Երկրորդ. իրավունքի արժեքի մասին հարցն արդիականացնող ևս մի գործուն է հանդիսանում կասկածը: Հիմնավորումն այն բանի, թե ինչու այս կամ այն առարկան արժեքավոր է, վկայում է դրանում սկզբնական վստահության բացակայության մասին: Իրավունքի արժեքը բացատրելը, այսպիսով, նշանակում է արձագանքել հասարակության կողմից բաց կամ լրելյամ կասկածներին: Այս հարցում համընդհանուր համաձայնությունը առիթ չէր տա հրապարակային մեղադրանքի համար, և այս դեպքում իրավունքի արժեքը հանդես կգար որպես ինքնին ընդունվող մի բան, ինչը ենթակա չէ հետա-

գա ռեֆլեքսիայի իր հանրահայտ ու ակնհայտ լինելու պատճառով:

Իրավունքի՝ որպես այդպիսինի, որպես ինքնուրույն մշակութային արժեք իր հետագա կոնկրետացումն է գտնում հատուկ բնույթի արժեքներում, որոնք վերաբերում են իրավունքի ձևին ու բովանդակությանը: Իրավունքը, խստորեն ասած, իր մեջ չի ձևավորում արժեքների սեփական եզակի համակարգ, այլ հանդես է գալիս իբրև հասարակության արդեն իսկ գոյություն ունեցող արժեքների ձև: Այն ձևավորվում է արսիոլոգիական խտացումների շուրջ: Իրավական արժեքների առանձնահատկությունը կայանում է, առաջին, նրանում, որ դրանք կրում են ձևականորեն ընդունված ու պաշտոնապես սահմանված բնույթ, ամրագրվում են նորմատիվ աղբյուրների համակարգում, պաշտպանվում իշխանության կողմից: Երրորդ. բանի որ իրավունքը կարգավորում է մարդկանց բացառապես արտաքին վարքագծային գործողությունները, ապա իրավական արժեքները պետք է դրսերվեն կոնկրետ առարկայացված ձևերում. հոգևոր արժեքները (սեր, իմաստություն, գեղեցկություն և այլն) հիմնականում ընկալվում են իրավունքի կողմից միայն այնքանով, որքանով հնարավոր է դրանց նյութականացված դրսերումը: Երրորդ՝ իրավական արժեքները, լինելով նորմատիվ կերպով նշանավոր, դրա պատճառով անկասկած կրում են ընդհանրացված, միջինացված, տիպիկ բնույթ: Այսպիսով, իրավական արժեքները կարող են սահմանված լինել իրեն տիպիկ սոցիալական նախասրբություններ, որոնք ստանում են պաշտոնակար նորմատիվ ձևաչում ու պաշտպանություն:

<sup>1</sup> St'u Value // Encyclopaedia Britannica. 11th ed. Vol. XXVII. P. 867.

<sup>2</sup> St'u Ивин А.А. Основания логики оценок. М., 1970. С. 12.

<sup>3</sup> St'u Супруп В.И. Ценности и социальная динамика // Наука и ценности. Новосибирск, 1987. С. 162.

<sup>4</sup> St'u Лапин Н.И. Модернизация базовых ценностей россиян // Социологические исследования. 1996. N 5. С. 5.

<sup>5</sup> Սամրամասն տե՛ս Լոսսкий Н. Ценность и бытие. Бог и Царство Божие как основа ценностей. Париж. 1931. С. 6-15.

<sup>6</sup> St'u Радбrough Г. Философия права. М., 2004. С. 11.

- <sup>7</sup> Տե՛ս Չեսնով Ի.Լ. Истоки права // Истоки и источники права: очерки / под ред. Р. А. Ромашова, Н.С. Нижник. СПб., 2006. С. 62-64.
- <sup>8</sup> Տե՛ս, օրինակ՝ Мартышин О.В. Проблемы ценностей в теории государства и права // Государство и право. 2004. № 10. С. 5.
- <sup>9</sup> Տե՛ս Moss M. Очерк о даре // Общество. Обмен. Личность: труды по социальной антропологии. М., 1996. С. 99.
- <sup>10</sup> Տե՛ս Соловьев В.С. Право и нравственность. М. - Минск. 2001. С. 42.
- <sup>11</sup> Տե՛ս Познер Р. Экономический анализ права. Т. 1. СПб., 2004. С. 340.
- <sup>12</sup> Տե՛ս Անդրեասյան Աննա Պիգалև Ա.Ի. Культура как целостность (методологические аспекты). Волгоград, 2001. С. 34-38.
- <sup>13</sup> Տե՛ս Անդրեասյան Աննա Պիգалев Ա.Ի. Культура как целостность (методологические аспекты). Волгоград, 2001. С. 34-38.
- <sup>14</sup> Տե՛ս Անդրեասյան Աննա Պիգалև Ա.Ի. Կультура как целостность (методологические аспекты). Волгоград, 2001. С. 34-38.
- <sup>15</sup> Տե՛ս Մալиновский Б. Научная теория культуры. М., 2005. С. 103-111.

Армен Шукурян

Аспирант института философии,  
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

*Понятие социально-культурной ценности права*

В данной статье раскрывается сущность и понятие социально-культурной ценности права. Право рассматривается автором в контексте общесоциального подхода, как социально-культурная ценность конкретной цивилизации.

**Ключевые слова:** право, социальное общество, культура, ценность, система ценностей, нормативный регулятор.

Armen Shukuryan

PhD student of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA

SUMMARY

*The concept of socio-cultural values of the right*

This article reveals the essence and the concept of socio-cultural values of the right. The right is considered by the author in the context of General social approach as a socio-cultural value of a particular civilization.

**Keywords:** law, social society, culture, values, system of values, a normative regulator.